

ոռմէլունցած է, Անատոլուն այլ ցած. բայց
Սամապոլոյն ծանր եւ զնոջ, թէ՛ ջուխան, թէ՛
բամխան, թէ այլն:

ՈՂԲ Ի ՄԱՀՆ ԵՐԻՅԱԳՈՅՆ ՔՐՈՋՆ ՃՈՒՀԱՐԻ

Եւ մինչ ես ի ճանապարհի պատրաստու-
թեան էի, եկն այր մի Վանեցի՝ Չիրախ ա- 45
նուն, իմ ծանօթ եւ սիրելի: Սա երեք ինձ
զուժ եւ բոթ ի Չամոսցու քաղքէն, թէ Մեծ
քոյրդ մեռաւ. ես թաղեալ՝ եկի ասա: Չայս
իմ լուեալ՝ խռովեցաւ հոգի իմ, դալարեցան
ազիբ իմ, շիրթեցաւ անձն իմ, թարչամեցաւ 50
դոյն երեսաց, մթացան աչք իմ, շիւարեցաւ
միտքս, բեկաւ մէջք իմ եւ անկայ երկիր եւ
լալով ասեմ. Վա՛յ ինձ, քաղցրիկ քոյր իմ.
Եղո՛ւկ թշուառականիս. ո՛հ մեծի աղէտիս եւ
աւա՛ղ տարակուսանացս: Ո՛վ բարերար իմ, 55
ո՛վ երախտաւոր իմ, ո՛վ սիրելեցեալդ իմ,
ո՛վ աշխատաւոր իմ, ո՛վ քոյր իմ եւ մայր.
Քանզի զմայրս սակաւ գիտացի, բայց զքեզ
երկար ի կենցաղս իմ: Դու էիր մխիթար իմ,
դու ամուսնիչ, դու ցաւոցս իմոց փարատիչ, 60
դու էիր ուրախութիւն իմ. արդ զի՞նչ գոր-
ծեցից կամ առ ո՞վ զիմեցից: Ով զթած եւ
կորովամիտ քոյր իմ, ընդէ՞ր սակաւ մի ոչ
լուեցեր, սուղ մի ոչ յամեցեր, է՞ր չի լուցիր
մինչ ես դայի. է՞ր չեղէ արժանի տեսլանն 65
քո, քանզի դու էիր միշտ ի սենեակ սրտիս,
դու էիր ի միտս իմ, հանապաղ յիջէի դքո՞

49 յոգի: — 50 յազիբ: շրթեցաւ: — 66 էր: